Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հակ
296, 297, 298
299, 300, 301
302, 303, 304,
305, 306, 307,
308, 309, 310, 311

2000

# ՀԱՍԱՐԱԿԱՑ

# ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՄԱՐԱԿԱՑ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԶ.

# ՁԱՅՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՄԱՌՕՏ

Acoustique.

Musique.

ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ

1858

# ՁԵՅՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

309

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԹԱՆԳԱՐԱՆ
ՀԱՏՈՐ ԺԶ.

# ՁԱՅՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՄԱՌՕՏ

ԶՄԻՒՌՆԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ
1858

17965

2$-311

3092003

(7347-57)

## ԱՐԴԻՈՅ ԸՆԹԵՐՑՈՂ

ՀԱՄԱՌԱԿԱՑ ԹԱՆԳԱՐԱՆԸ որ հատորովս վերջացաւ ։

Պ. Կրապանտեան ։

# ՄԻԿ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ
# ՁԱՅՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ
## ՎՐԱՅ

ԻՆՉՊԷՍ որ ջրին մէջ եթէ քար մը ձգենք՝ ալիք ալիք կ'ըլլայ, նոյնպէս ալ օդին մէջ կը գոյանայ՝ երբ բան մը շարժի. բաղխում մը ահա աս կերպիւ ականջնուս կը զարնէ, որ նաև ուղեղին հաղորդուելով՝ Ձայնը կըզգանք.

---

Երբեմն ձայն ըսուածը՝ օդին բաղխմանէն և կամ նեղ տեղէ մը ուժով սլանալէն յառաջ եկած զգացողութիւնն է ականջնուս, որմէ և ուղեղնուս, հոգինուս վրայ։

Ձայնը որ օդային ալիք է ճիշդ՝ զանազան չափով տևողութիւն, զօրութիւն, թողացում և ազդեցութիւն կ'ունենայ ըստ իր բաղխմանը և սուլմանը: ասոր

համար ալ ան ալիքները մեծ կ'ըլլան , լայն , երկայն , հաստ կամ թանձր՝ ըստ իրենց գոյացութեան պատճառին , ինչպէս ըսինք ։

---

Ջրին , շոգիներու և կազերու մէջէն ալ ձայնը կը հաղորդուի , նոյնպէս պինդ մարմիններէ ։

---

Եթէ հասկընալ ուզուի թէ ահագին գերաններուն մէջը լեցո՞ւկ է թէ պարապ՝ պէտք է մէկը երթայ գերանին մէկ գլուխի մէջ տեղը զարնէ ։ Թէ որ միւս կողմէն ականջ դնող մը զան լսէ՝ ըսել է որ գերանին մէջը լեցուկ է , իսկ եթէ չլսուի՝ ոչ ։

---

Ապակի տախտակի վրայ եթէ ամենաբարակ փոշի ցանենք , և աղեղով ( եայ ) մը ճօճայնենք՝ փոշին կը ճօճայ , կը ցաթկըռտէ և ապակիին վրայ նկարներ կը կազմէ խիստ սքանչելահիւս ։

Զարմանալին ան է որ 7 ձայներուն համաձայն աս ձայնանկարներուն (ինչպէս

կը կոչուին ) ձևերն ալ տարբեր կ'ըլլան , ( Տես պատկեր 1 ) .

Բնութիւնը 7 ցեղ ձայն տուած է , ( թէև աստիճաննին անհամար է ) որոնց անուններն են

| Եւրոպարէն | Տաճկերէն |
|---|---|
| Տօ | Չարկեահ |
| Րէ | Նէվա |
| Մի | Հիւսէյնի |
| Ֆա | Էվիճ |
| Սօլ | Րաստ |
| Լա | Տիւկեահ |
| Սի | Սէկեահ |

Այս 7 ձայներուն մէջ տեղերը 5 հատ ալ Կէս Ձայներ կան[1] . եթէ երգի մը մէջ վեր առեն մը գործածուի՝ Եւրո-

(1) . Եօթը կատարեալ ձայներուն պէտք էր որ 7 ալ կէս ձայն գտնուէր . 2 կէս ձայն պակաս գտած է արհեստը՝ մէկը սիին և տօին և միւսը միին և ֆային մէջտեղը . որով 5 կէս ձայն կը մնայ :

պարէն Տիեզերքէն, իսկ եթէ իջնալու տանը նուագուի Գեծօլ ·

Վերոյիշեալ 7 կատարեալ և 5 կէս ձայներէն կը գոյանան՝ այսինքն կըսկըզբնաւորին և կը կատարուին 24 Ինթօնացիոններն (Պէրտէ) ըսուածները · որոնց 12ը Մաժօրէ և 12ը Մինօրէ են ։

Այս բէրտէներուն մէջէն Ուտ բէրտէ է՝ Տօ Մաժօրէն · որովհետեւ իր մէջը ամենևին կէս ձայն չունի, այլ կը կազմուի անապական կատարեալ ձայներէ · (և ասոր համար Տօէն կըսկսին ձայները հաշուել ։) Բայց բոլոր միւսները կէս ձայն կը պարունակեն իրենց մէջը · ապա թէ ոչ՝ սխալ և աններդաշնակաւոր ըլլին ։

Աշխարհիս վրայ եղած բոլոր Երգերը աս 24 Ինթօնացիոններուն մէկուն և կամ մէկալին վրայ շինուած են ։

Բիանօն ամենէն հարուստ գործին է Երաժշտութեան մէջ, և ուրիշ նուագ մը չկայ, որուն վրայ նոյնին չափ կատարեալ նուագուի Երգ մը ։

Որովհետև մէկ հեղուն կրնայ տասը ձայն մէկտեղ հնչեցընել. և Աքքորտ բռուածը՝ ասանկ մէկ քանի ձայներ, այս ինքն՝ կրկին ձայներուն ամէնը մէկտեղ ունեցած հնչումին է. զոր օրինակ. տօ, մի, սօլ, տօ եթէ մէկտեղ զարնուին.

Բիանոյի վրայ երբ եղանակ մը նուագուի՝ ջութակի և կամ ֆլիւթի վրայ նուագուածէն աւելի անուշ և ներդաշնակաւոր կ՚ըլլայ. վասն զի Պասօ ունի իր հետը.

Այս Պասօն եղանակին ձայն բռնել մ՚է բայց Աքքորտերով և Օքթավերով, վերջապէս ամենակատարեալ կերպիւ մը, և չէ թէ հասարակ եղած Տէօ բռնելը.

Պասօ բռնելը զատ արհեստ մ՚է, զոր կատարեալ գիտնալու համար՝ մեծ դասատուք յատկապէս բաւական երկար ատեն դաս կ՚առնեն.

---

Օքթավ բռուածն ալ Ութերորդ կը նշանակէ, և երկու նոյնաձև բայց տարբեր աստիճանաւ ձայներու մէկտեղ հնչուելուն կ՚ըսեն. զոր օրինակ. Սօլ

և Սօլ մէկ Օքթավ են. Նաանկ՝ ամէն ձայն իր երկրորդէն սկսեալ մինչև Ութերորդ ձայնը ունի.

---

Աչչիաքաթոր ըսուածը ձայնին կոտըրտուիլն է, և Թրիլլ ըսուածը՝ դողալը:

---

Ձայն մը ընդհանրաբար իր ամենաերկար վիճակին մէջ մէկ Ռօնտ է,
և կ'արժէ երկու Պլանշ.
Պլանշը „ „ Նօար.
Նօարը „ „ Քրօշ.
Քրօշը „ „ Տուպլ քրօշ.
Տուպլ քրօշը „ „ Թրիփլ քրօշ.
Թրիփլ քրօշը „ „ Քատրիփլ քրօշ.
և ասոնք ասանկ իրարու վրայ կը տիրեն.

Օրինակի աղագաւ. եթէ մէկ Ռօնտ մը նուագուի՝ անոր չափին հետ մէկտեղ կրնայ նուագուիլ նաև 64 Քատրիփլ քրօշներ ալ: Ասոնք պատկերին մէջը աղէկ կ'երևին:

---

Երբ Օրքէսթր մը մէջ եղանակը պահանջէ որ մէկ քանին լռեն և միւսները

նուագեն, և կամ Ռիանօյի երկու ձեռաց մէկը լռէ և միւսը նուագէ՝ կը հարկաւորի որ լռութեան նշաններ ունենանք, որով և լռող կեցողը կարենայ չափել և իր վերստին սկսելու ժամանակը գիտնալ. ասոր համար հնարած են ասանկ Լռութեան Նշաններ, որ են

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ռօնտի համար | 1 Փօղ այսինքն | 1 Ռօնտի ձայնին փոխարէն լռուե չափը | | | |
| Պլանշի " | 1/2 Փօղ " | 1 Պլանշի | " | " | " |
| Նուարի " | 1 Սուփիր " | 1 Նուարի | " | " | " |
| Քրօշի " | 1/2 Սուփիր " | 1 Քրօշի | " | " | " |
| Տուպլ քրօշի " | 1/4 Սուփիր " | 1 Տուպլ քրօշի | " | " | " |
| Թրիփլ քրօշի " | 1/8 Սուփիր " | 1 Թրիփլ քրօշի | " | " | " |

Ռիթմ ըսուածն ալ եղանակի մ՚ունեցած չափին բաժանումներն է. զոր օրինակ. եթէ եղանակ մը 4 Թեմբօյի վրայ շինուած ըլլի՝ կը չափեն և նոյնին մէջը գտնուած ամեն մէկ 4 չափերը կը բաժնեն գծով, և ան ամեն մէկ բաժանմանը Ռիթմ կ՚ըսեն, հասարակօրէն պար ըսուածը։

Ռիթմօյի գալով՝ վերոյիշեալ Ոօնփի բաժանումներուն ձեւը միայն կը փոփոխին. երգ. մը ի՞նչ Թեմբօյի վրայ շինուած է՝ ան եղանակին մէջ ալ Ոօնփ մը այնչափ կը բաժնուի. զօ՛՛ Վալսի մէջ, որ ընդհանրաբար 3 Թեմբօյի վրայ շինուած լինի՝ Ոօնփը ամեն մէկ Ռիթմօին երեքի կը բաժնուի և անանկ նաև բոլորը. (ուր որ Բօլչափ մէջ 2ի)։

Ասանկ իմացիր նաև ամեն Թեմբօի վրայ շինուած եղանակներու նկատմամբ ալ։

Ինչպէս են 2/4, 3/4, 12/8, 6/8, ևն։

---

Եւրոպական խազով 7 կերպ զանազան տարբեր ընթերցումներ կան. բայց Բիանօի համար 2ը միայն կը գործածուին։

Կլէ տը սօլայ ձեռքին՝
Կլէ տը ֆա ձախ ձեռքին համար

Իրարմէ ասոնք երեք ձայն տարբերութիւն ունին․ զօ՛՛ կլէ տը ֆային մէջ լա՝ կլէ տը սօլի մէջ ֆա է, և կլէ տը սօլի մէջ րէ՝ կլէ տը ֆայի մէջ ֆա է, ևն։

Եւ ասոր համար մէջ տեղէն երկուքի կը բաժնուի Փիանօն՝ վարի կողմը կլէ տը ֆային նուիրեալ, իսկ վերի կողմը կլէ տը սօլին։

Երբեմն լինի որ երկու ձեռքն ալ միատեղ կլէ տը սօլի մէջ և կամ կլէ տը ֆայի մէջ կը գործածուի ըստ եղանակին ներդաշնակութեանը։

---

Եւրոպիոյ երգէոնի եկեղեցական նուագմանց խազերը ասոնցմէ քիչ մը տարբերութիւն ունին․ զօ՛՛ 4 գծի վրայ շինուած են, ուր որ ասոնք 5 գծի վրայ․ անոնք քառակուսի են և ասոնք կլոր, ևն։ Դրած պատկերնիս ասոնց ձևը միայն կը ներկայացնէ։

---

Գրեթէ ամէն բանի մէջ Եւրոպական և Արևելեան երևակայութիւնները իրարմէ տարբեր են, անանկ ալ երաժշտութեան մէջ Արևելեանը և Եւրոպականը հիմնովին զանազան են իրարմէ ։

Եւրոպական նուագածու մը ասոր համար անկարելի է որ Արևելեան եղանակաց վրայ կատարեալ գաղափար մ'ունենայ ։

Վասն այսորիկ մենք ըստ մեր դատողութեանը քիչ մը տեղեկութիւն տանք ·

Առաջին՝ այն խօսինք որ Եւրոպացւոց Օբէրաները սքանչելի են, և Արաբի երգերն ալ հիանալի են ։

Բայց Արևելքի երգերուն մեծ մասը Ըէմբօէ զուրկ ըլլալուն՝ Եւրոպացի երաժշտապետք կը դժգոհին, բայց ամենևին չեն հասկընար անոր թմբրեցուցիչ զօրութիւնները ։

Արևելեան եղանակները գրեթէ միշտ Մինօրէ էնհարմօնիքէ վրայ շինուած լինին, որոնց դարձուածները պէտք է գործածել Բիանօի վրայ ալ նուագուելու ա-

տեն, որ անկարելի չէ։

Բայց 'ի սկիզբ՝ ջանալ պէտք է որ բուն իր Արևելեան ոճը ունենայ լեզուն թէ և Բէմէօէ դուրս։

Պասօին գալով՝ յետին աստիճանի դիտողութիւն արժան է ընել, որովհետև եթէ սխալ ու գէշ պասօ բռնուի՝ այլանդակ բան մը կը դառնայ նաև ամենագեղեցիկ եղանակն ալ։

Նուշ. հեշտ և բնիկ եղանակին յարմար պասօ եթէ բռնել ուզուի, երբէք պէտք չէ ախորթ գործածել, որ կը խանգարէ կը ձգէ. այլ միշտ հասարակ կերպիւ փէմ բռնել կ'ուզէ օխթաւով գրեթէ շատ հեղ երգին (ջանբօին) հետ ընկերացեալ։

---

Աղէկ Բիյանօ նուագողի համար դժուարութիւն չկայ Օրկ — Աքքամփանը բռնուած երգէօններն ալ նուագել, թէև ուրբերուն համար քիչ մը աշխատիլ պէտք է, մանաւանդ պէտք են ձեռքերը Ըէկաբօ ըլլան միշտ։

309-2003

(7347-17)

# ՎՐԻՊԱԿՔ

| ՍԽԱԼ | ՈՒՂԻՂ | ՀԱՏՈՐ | ԵՋ | ՏՈՂ |
|---|---|---|---|---|
| իրացուցանել | իւրացուցանել | 1 | 14 | 5 |
| խառնենք | խառնենք կաԹսայի մէջ | 2 | 19 | 10 |
| անագած ըլլայ | | 5 | 20 | 19 |
| տարէ | դարէ | 7 | 11 | 5 |
| , նոյնպէս բարձր | նոյնպէս բարձր. | 9 | 12 | 13 |
| տես Հատոր ԺԲ. | տես Հատոր ԺԱ. | 10 | 9 | 22 |
| Համպր Ֆիրմա անուանով | Համպր Ֆիրմա՝ | 11 | 20 | 9 |

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽԱԶ.



# Ի ՆՄԻՆ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ:

Եգիպտական նշանագիրք
Մեղէլ, Տենչէր
Զայլէլ
Մաթենէկ
Տեգրանուհի
Պանկաբանութեան համառօտ
Երկրաբանութեան „
Ձգողաբանութեան „
Վիճաբանութեան „
Ելեկտրաբանութեան և
Կալվանաբանութեան „
Կենդանաբանութեան „
Ոսաբանութեան „
Ջերմաբանութեան „
Առողջաբանութեան „
Ապաղաբանութեան „
Լուսաբանութեան „
Մագնիսաբանութեան „
Մետաղաբանութեան „
Նտանաբուծութեան „
Մթնոլորտաբանութեան „
Ձայնաբանութեան „